# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.04.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2021/113**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.04.2021թ. թիվ 26/26-1/6316-2021 գրությամբ «Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 21.04.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/807-21 գրության հիման վրա 26.04.2021թ. թիվ 26/26-1/6316-2021 գրությամբ նախաձեռնել է «Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ես՝ Վիհլեն Հովակի Մարտոյանս, հանդիսանալով «Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ի տնօրեն, հայտնում եմ Ձեզ այն մասին, որ 08.04.2021թ.-ին մասնակցել եմ ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/46 ծածկագրով գնման ընթացակարգին, որի արդյունքում իմ կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել է խախտումներ, որի մասին ինձ տեղեկացրել է ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/46 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մարիա Ղազարյանը 12.04.2021թ-ին՝ info@epromotion.am էլեկտրոնային փոստի միջոցով, որը ես պետք է շտկեի մեկ օրյա ժամկետում և շտկված տարբերակը ուղարկեի նույն էլ. հասցեին:

Քանի որ, հայտերի բացումը տեղի է ունեցել 08.04.2021թ-ին, ես երեք օր եղել եմ հետևողական իմ էլ. փոստին և ոչ մի նամակ չեմ ստացել կապված այդ մրցույթի հետ ու միաժամանակ այդ օրերին եղել եմ վատառողջ, մտածել եմ, որ ամեն ինչ ճիշտ է գրված այդ իսկ պատճառով դրանից հետո հետևողական չեմ եղել:

14.04.2021 թվականին՝ տեսնելով այդ նամակը, շտկել եմ արձանագրված սխալները և նույն օրը ուղարկել եմ նշված էլ. հասցեին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ մեկ օրյա ուշացմանս պատճառը համարել հարգելի»:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/113 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 30.04.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել գրավոր ներկայացված դիրքորոշումը:

**3. <u>«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.04.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/807-21 գրությամբ հայտնել է

հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2021թ.-ի ապրիլի 8-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 10:00-ին տեղի է ունեցել ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/46» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի «Վերանորոգման աշխատանքներ» բաժնի 12-րդ, 15-րդ, 16-րդ տողերով ներկայացված աշխատանքների անվանումները չեն համապատասխանում սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված անվանումներին, ծավալաթերթ-նախահաշվի փաստացի «Ընդամենը» ստացվող արժեքների սյունակի անվանումը լրացված չէ, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշվում ներառված բաժինների (բացառությամբ «Վերանորոգման աշխատանքներ» բաժնի) համար հաշվարկված կշիռների շեղումները գերազանցում են սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի 10%-ը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 12.04.2021թ.-ին համակարգի միջոցով ծանուցմամբ «Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ի կողմից 13.04.2021թ.-ին գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին շտկված փաստաթուղթ չի ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/113 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 30.04.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2021/113 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/113 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ 08.04.2021թ. կայացած հայտերի բացման և գնահատման նիստի վերաբերյալ արձանագրվել է հետևյալը. «Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի «Վերանորոգման աշխատանքներ» բաժնի 12-րդ, 15-րդ, 16-րդ տողերով ներկայացված աշխատանքների անվանումները չեն համապատասխանում սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված անվանումներին, ծավալաթերթ-նախահաշվի փաստացի «Ընդամենը» ստացվող արժեքների սյունակի անվանումը լրացված չէ, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշվում ներառված բաժինների (բացառությամբ «Վերանորոգման աշխատանքներ» բաժնի) համար հաշվարկված կշիռների շեղումները գերազանցում են

սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի 10%-ը»:

3. 08.04.2021թ. հայտերի բացման և գնահատման նիստին կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է կասեցնել նիստը և տրամադրել Ընկերությանը մեկ աշխատանքային օր ժամկետ՝ հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու համար:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 12.04.2021թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.04.2021թ. թիվ 26/26-1/6316-2021 գրությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 21.04.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/807-21 գրությունը և կից փաստաթղթերը, «Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ի դիրքորոշումը՝ կից փաստաթղթով, և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ ***Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը <u>նույն օրը</u> դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/46» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ 08.04.2021թ. կայացած հայտերի բացման և գնահատման նիստի վերաբերյալ արձանագրվել է հետևյալը. «Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի «Վերանորոգման աշխատանքներ» բաժնի 12-րդ, 15-րդ, 16-րդ տողերով ներկայացված աշխատանքների անվանումները չեն համապատասխանում սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված անվանումներին, ծավալաթերթ-նախահաշվի փաստացի «Ընդամենը» ստացվող արժեքների սյունակի անվանումը լրացված չէ, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշվում ներառված բաժինների (բացառությամբ «Վերանորոգման աշխատանքներ» բաժնի) համար հաշվարկված կշիռների շեղումները գերազանցում են սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի 10%-ը»:

08.04.2021թ. հայտերի բացման և գնահատման նիստին կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է կասեցնել նիստը և տրամադրել Ընկերությանը մեկ աշխատանքային օր ժամկետ՝ հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 12.04.2021թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերության տնօրենը սույն գործի շրջանակներում ներկայացված դիրքորոշմամբ մասնավորապես հայտնել է հետևյալը. «Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 08.04.2021թ-ին: Երեք օր եղել եմ հետևողական իմ էլ. փոստին և ոչ մի նամակ չեմ ստացել կապված այդ մրցույթի հետ ու միաժամանակ այդ օրերին եղել եմ վատառողջ, մտածել եմ, որ ամեն ինչ ճիշտ է գրված այդ իսկ պատճառով դրանից հետո հետևողական չեմ եղել: 14.04.2021 թվականին՝ տեսնելով այդ նամակը, շտկել եմ արձանագրված սխալները և նույն օրը ուղարկել եմ նշված էլ. հասցեին»:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ***<u>նորմը մեկնաբանվում է</u>՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ <u>ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից,</u>*** ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

***<u>Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և</u>***

***ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:***

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը ***նույն օրը*** դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

***Վերոգրյալ նորմի բովանդակությունից հետևում է, որ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարի համար սահմանված է էլեկտրոնային եղանակով նույն օրը դրա մասին մասնակցին ծանուցելու պարտականություն:***

Ընդ որում, Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները չպահպանելու դեպքում դրանք չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ գործով առկա փաստական հանգամանքները համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը, այն է՝ Ընթացակարգի

գնահատող հանձնաժողովը թիվ 3 արձանագրությամբ հայտերի բացման և գնահատման 08.04.2021թ. նիստին արձանագրել է Ընկերության կողմից ներկայացված հայտում անհամապատասխանություն, մինչդեռ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ Ընկերությունը նույն օրը՝ 08.04.2021թ., ծանուցվելու փոխարեն ծանուցվել է 12.04.2021թ., որպիսի պայմաններում խախտվում է նաև իրավական որոշակիության սկզբունքը:

Նման պայմաններում գտնում եմ, որ ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության, հետևաբար հնարավոր չէ արձանագրել «Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.04.2021թ. թիվ 26/26-1/6316-2021 գրությամբ «Հայր և որդի Մարտոյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**